

*Միրելի գործընկերներ, պատվիրակներ*

Ողջունում եմ Ձեզ Հայաստանի պետական հիմնարկների ճյուղային արհմիության 7 –րդ համագումարին

Եկեք միասին հիշենք վերջին 5 տարիների ընթացքում մեր ճյուղային արհմիության անցած ուղին և մեկ անգամ ևս ամփոփենք ստացված-չստացվածը, գնահատենք կորուստներն ու ձեռքբերումները:

Բոլորս էլ շատ լավ գիտենք, որ անկախության տարիները երբեք էլ հեշտ չեն եղել ոչ արհմիության անդամների և ոչ էլ արհմիության համար ընդհանրապես:

Վերջին 5 տարին այդ առումով բացառություն չէր: Այս տարիներին Հայաստանը փոխեց 3 կառավարություն. դրանցից յուրաքանչյուրը իրականացրեց փոփոխություններ, որոնք չէին կարող չազդել աշխատողների և, հետևաբար, նաև արհմիության անդամակցության վրա:

Երևի հիշում եք՝ 2013 թվականին սոցիալական ապահովության վճարները, որոնցից մեծ մասը գործատուն էր վճարում, վերացվեցին և միացվեցին աշխատավարձին. արդյունքում ավելացան հաշվարկային աշխատավարձերը և եկամտային հարկը, բայց աշխատողների փաստացի եկամուտը չավելացավ: Քանի որ արհմիության անդամավճարը հաշվարկվում է աշխատավարձի մեկ տոկոսի չափով, այս փոփոխությունը պետք է որ դրական ազդեր արհմիության բյուջեի վրա, սակայն խնդիրը մեկն էր՝ աշխատողների փաստացի ստացվող աշխատավարձն այդ դեպքում մի փոքր նվազում էր: Քանի որ սոցիալական վիճակը երկրում այս տարիներին միշտ էլ ծանր է եղել, նույնիսկ 200-500 դրամով պակասող աշխատավարձն արդեն խնդիրներ էր ստեղծում աշխատողների համար: Անդամ կազմակերպությունների ղեկավարներից որոշակի ջանքեր պահանջվեցին անդամակցությունը պահպանելու համար: Այն նախագահները, որոնք օր առաջ քայլեր ձեռնարկեցին, համապատասխան մոտիվացիոն

աշխատանք կատարեցին, կարողացան պահպանել անդամակցությունն իրենց կողմից ղեկավարված կազմակերպություններում, իսկ այնտեղ որտեղ նախագահները չդրսևորեցին համապատասխան մոտեցում, ունեցանք անդամների թվի անկում:

Կառավարության մի այլ նախաձեռնություն, որը մեծ աղմուկ բարձրացրեց աշխատողների շրջանում, Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրումն էր՝ 2013-2014 թվականին ես և մեր աշխատակազմը ակտիվ մասնակցություն ենք ունեցել կենսաթոշակի կուտակային բաղադրիչի ներդրման հետ կապված քննարկումներին և բողոքի ակցիաներին, հարցը քննարկվել է նաև անդամ կազմակերպություններից շատերում: Ես անձամբ «դեմ եմ» խմբի հետ միասին մասնակցել եմ քննարկումների, ասուլիս ենք տվել, ՀԱՄԿ-ում ենք քննարկել առաջացած խնդիրը, ինչի արդյունքում նաև ՀԱՄԿ-ի նախագահ Է.Թումասյանը այդ հարցով դիմել է հանրապետության նախագահին: Իհարկե այնպես չէր, որ մենք այդ համակարգին բացարձակ դեմ էինք, սակայն նրանում ռիսկեր էինք տեսնում և այն ժամանակավրեպ էինք համարում: Կարող ենք արձանագրել, որ միասնական պայքարը որոշակի արդյունք տվեց, որոշ դրույթներ փոխվեցին այդ օրենքում, և, չնայած ամենաշատ պայքարողը մեր արհմիությունն էր, բայց հենց մեր արհմիության անդամների վրա այդ օրենքը ի վերջո տարածվեց: Սակայն այն գոնե հետաձգվեց և ներդրվեց միայն աշխատավարձերի բարձրացումից հետո, իսկ մինիմալ աշխատավարձ ստացողների փոխարեն վճարեց գործատուն, մեր դեպքում՝ պետությունը:

Այնուամենայնիվ, այս փոփոխությունները ևս բացասական ազդեցություն ունեցան արհմիության անդամակցության վրա, օրինակ՝ սոցիալական վճարի ներդրմանը զուգահեռ նույնիսկ ունեցանք դեպք, երբ ղեկավարի պահանջով աշխատողները դադարեցրեցին արհմիության անդամակցությունը, որպեսզի ինչ որ կերպ կոմպենսացվի նոր պարտադիր սոցվճարի բացասական ազդեցությունը և ինչ-որ չափով կանխվեն աշխատողների դժգոհությունները:

Ի դեպ, աշխատավարձերի բարձրացման համար երկար պայքարել ենք սկսած 2008-ից, սակայն 2013-ին արդեն մեր պայքարը տեղափոխեցինք այլ դաշտ, կազմակերպեցինք նաև փողոցային ակցիաներ, ստորագրահավաք, մեր պահանջին միացավ պետական ոլորտի միջազգային արհմիությունը և արդյունքում 2014-ին ունեցանք քաղաքացիական ծառայողների աշխատավարձերի բարձրացում: Բայց նորից, աշխատավարձերի բարձրացման հետ մեկտեղ բարձրացավ 1 տոկոս անդամավճարի չափը և կրկին կանգնեցինք անդամներ կորցնելու խնդրի առջև: Յուրաքանչյուր խորհրդի անդամ հնարավորինս ջանքեր էր ներդնում իր կողմից ղեկավարված արհմիութենական կառույցում միասնությունը պահպանելու համար: Իհարկե եղան և անցանկալի լուծումներ, կազմակերպություններից մեկ-երկուսում գնացին անդամավճարի պակասեցման:

Նույն տարիներին Երևանում տրանսպորտի գնի թանկացման քաղաքացիական շարժումներին ենք մասնակցել, եթե հիշում եք, ես ներկայացնում էի մեր արհմիությունը քաղաքապետարանի կողմից ստեղծված հանձնաժողովում, որտեղ բարձրաձայնել եմ մեր մոտեցումները: Դրանից հետո քաղաքապետարանին եմ փոխանցել համաշխարհային հանրային ծառայությունների արհմիության կողմից պատվիրված մանրակրկիտ հետազոտությունը քաղաքային տրանսպորտի համակարգի կազմակերպման վերաբերյալ: Կարծում եմ՝ այն օգտակար էր քաղաքապետարանի համար, և այն համակարգը, որն այսօր պատրաստվում են ներդնել, մոտ է մեր առաջարկած տարբերակին: Բացի նշված սուր հարցերի քննարկումներին մասնակցելուց, ակտիվ մասնակցել ենք նաև պետական ծառայողների սոցիալական փաթեթի հետ կապված տարբեր առաջացած խնդիրների քննարկմանը, առաջարկություններ ենք ներկայացրել տեղական ինքնակառավարման մարմինների աշխատողների և դրանց ենթակայությամբ գործող հիմնարկների աշխատողներին սոցփաթեթ տրամադրելու, արձակուրդում գտնվող աշխատողին հանգստանալու գնալիս այն

միանվագ վճարելու վերաբերյալ: 2017-ին, երբ սոցիալական փաթեթի գոյությունը վտանգի տակ էր, նույնպես կառավարությանը ուղղված առաջարկություններ ենք ներկայացրել և՛ նախագահության, և՛ խորհրդի անունից, նաև թերթերում ենք հանդես եկել մեր պահանջներով: Դրա հետ կապված մեր առաջարկներն ընդունվեցին բացի մեկից՝ համայնքային ծառայողների և ՀՈԱԿ-ների հարցերը այդպես էլ դեռ օդում կախված են, միայն Երևանի քաղաքապետարանը կարողացավ գոնե ապահովագրել իր աշխատակիցներին:

2016 թվականին Հայաստան հասավ աշխարհում արդեն վաղուց տարածում ստացած այսպես կոչված «կոշտ խնայողության» քաղաքականությունը: Մեր կառավարությունն այլոց պես ևս որոշեց գնալ պետական համակարգի վերակառուցման և աշխատողների կտրուկ կրճատման: Այս մոտեցումները քննարկել ենք և՛ նախագահության, և՛ խորհրդի նիստերին, հատուկ քննարկումներ ենք կազմակերպել, գրավոր դիմել ենք կառավարությանը: Մեզ սատարել են նաև միջազգային արհմիությունները, որոնք, դիմելով վարչապետին, վկայակոչելով նաև Եվրոպական փորձը, կոչ են արել բանակցել արհմիությունների հետ և այլ տարբերակներ գտնել տնտեսության զարգացման համար: Ես անձամբ հարցազրույցներ եմ տվել ԶԼՄ-ների ներկայացուցիչներին և մեր բացասական կարծիքն եմ հայտնել: Համենայն դեպս հաջողվեց ինչ-որ չափով թեկուզ ժամանակավոր կանգնեցնել սպասվող կրճատումները:

Չնայած այս բոլոր գործընթացներին՝ մենք չկարողացանք կամ գուցե չուզեցանք մեծ շարժում կազմակերպել այս գործընթացների դեմ: Աշխատողները, նույնիսկ կանգնած լինելով աշխատանքը կորցնելու վտանգի առջև, այնուամենայնիվ հույս ունեին, որ այս կամ այն կերպ կլուծեն իրենց հարցերը: Դեր խաղաց նաև մեր ուժերի նկատմամբ անվստահությունը և մեծ պայքարի մեջ մտնելու անպատրաստ լինելը: Եվ այսօր մենք ունենք այն ինչ ունենք: Մեր անդամ կազմակերպություններից մեկը՝ «Լուսանշան» ՊՈԱԿ-ը, լուծարվում է կառավարության որոշմամբ, և չնայած նրան, որ այսօր նրանց

ներկայացուցիչները պատվիրակների կարգավիճակով մասնակցում են մեր համագումարի աշխատանքներին, այնուամենայնիվ, այդ ծառայությունը շատ շուտով փոխանցվելու է մասնավորին:

Վերջին 2 տարիներին սկսեց իրականություն դառնալ վաղուց պլանավորված համայնքների խոշորացումը: Այսօր դեռ չենք կարող միանշանակ ասել, թե մեծ հաշվով ինչ ազդեցություն կունենա այդ գործընթացը երկրի զարգացման վրա: Կարծես թե լավում են ն՛ բացասական, ն՛ դրական կարծիքներ: Բայց այն, որ արհմիության անդամակցության վրա այդ գործընթացը արդեն ունեցել է և դեռ շարունակելու է ունենալ բացասական ազդեցություն, միանշանակ է: Մենք փաստացի կորցրել ենք մի քանի տարածքային միություն, քանի որ տարածքներում մի քանի տասնյակ համայնքապետարանների փոխարեն այսօր գործում են մեկ կամ երկուսը: Իսկ այն դեպքում, երբ արհեստակցական կազմակերպություն չկա հենց այդ երկուսում, հետևաբար չկա նաև տարածքային միություն:

Եվ ամենավերջին կաթիլը, որը ևս ազդեց արհմիության անդամակցության վրա, այպես կոչված «1000 դրամների» օրինագիծն էր:

2015 թվականին կնքվեց նոր հանրապետական եռակողմ պայմանագիրը, որի գործողությունների ծրագիրը ապահովելու համար ստեղծվեց եռակողմ հանձնաժողով կառավարության, արհմիությունների և գործատուների հավասար թվով ներկայացուցիչներով: ՀԱՄԿ-ի նախագահ Էդուարդ Թումասյանի առաջարկով հանձնաժողովում ընդգրկվեցի նաև ես: Այս երեք տարիների ընթացքում հանձնաժողովի նիստերին քննարկվել են աշխատանքային իրավունքների հետ կապված հարցեր, որոնց քննարկման ժամանակ առավել ակտիվ է եղել արհմիութենական կողմը՝ ՀԱՄԿ-ի նախագահի տեղակալ Բորիս Խարատյանի գլխավորությամբ: Քննարկումների արդյունքում հաջողվել է կանխել աշխատողների իրավական վիճակը վատթարացնող մի քանի օրենսդրական նախաձեռնությունների ընդունումը: Քանի որ օրակարգում աշխատանքային

օրենսգրքի փոփոխություններն են, այդ աշխատանքները շարունակվում են: Պետական ապարատի կրճատումների հետ կապված և պետական աշխատողների նկատմամբ ՁԼՄ-երի կողմից հասարակության բացասական վերաբերմունք ձևավորելու փորձերին ընդառաջ մեր արհմիության առաջարկով եռակողմ հանձնաժողովի նիստերից մեկում քննարկվեց Հայաստանի Հանրապետությունում հունիսի 23-ը որպես Հանրային ծառայողի օր ընդունելու մասին հարցը: Մենք գտնում ենք, որ այդ օրվա հռչակումը կարևոր դեր կխաղա հանրային ծառայությունների արժեքն ու դերը հանրության շրջանում բարձրացնելու համար: Չնայած առաջարկը ստացավ եռակողմ հանձնաժողովի դրական գնահատականը, սակայն մինչ վերջին օրերը տեղեկություններ չունեինք առաջարկը վերջնական ընդունելու մասին: Համագումարից առաջ ստիպված նորից նամակով դիմեցի աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և 2 օր առաջ ստացանք պատասխան, որ առաջարկում են հարցը քննարկել եռակողմ հանձնաժողովի մոտակա նիստին: Բայց գոնե հույս ունենք, որ մի անգամ էլ քննարկելուց հետո մեր առաջարկը վերջապես կընդունվի:

Աշխատողների իրավունքների պաշտպանության հետ կապված աշխատանքների հետ զուգահեռ անցած 5 տարիների ընթացքում ճյուղային մակարդակով ես և խորհրդի ու նախագահության ակտիվ անդամները տարբեր հնարքներ էինք փնտրում արհմիութենական կյանքը ակտիվացնելու համար: Դրանցից մեկը եղավ սպորտային միջոցառումների կազմակերպումը: Առաջին իսկ փորձը ցույց տվեց, որ հետաքրքրությունը մեծ է, և մենք շարունակեցինք աշխատել նաև այդ ուղղությամբ: 5 տարում անցկացվել է բոուլինգի 5, շախմատի 3 և սեղանի թենիսի 2 առաջնություն, մեկ անգամ էլ անցկացրել ենք երաժշտական՝ կարաոկե մրցույթ: Այդ միջոցառումները դեռևս անցկացվում են Երևան քաղաքի արհմիութենականների համար, բայց հույս ունենք, որ մի օր մեզ կմիանան նաև տարածքային միությունները: Այն մասին, որ այդպիսի միջոցառումները հետաքրքրություն են առաջացնում, վկայում են արհմիության

անդամների կողմից արվող առաջարկները տարբեր այլ սպորտային միջոցառումների անցկացման մասին: Կարող եմ ասել, որ այդ միջոցառումները նպաստեցին նրան, որ որոշ կոլեկտիվներում ևս սկսեցին անցկացվել մրցաշարեր, որպեսզի ընտրեն լավագույններին և ներկայացնեն մեր ճյուղայինի մրցույթում, ունեցանք դեպք, երբ նախարարը պարզատրեց ճյուղային արհմիության մրցույթում հաղթած թիմի խաղացողներին: Կարծում եմ՝ ընդհանուր արհմիութենական շարժման համար էլ լավ կլիներ, որ անցկացվեին մրցաշարեր ճյուղայինների միջև: Այս միջոցառումները նաև արհմիութենական անդամակցության լավ մոտիվացիա են, քանի որ շատ ծախսատար չեն և ցանկության դեպքում հնարավոր է կազմակերպել:

Երկրորդ գաղափարը, որ իրականություն դարձավ, երիտասարդ արհմիութենականների իրազեկման աշխատանքն էր: Այս գաղափարը իրագործելու համար մեզ օգնեցին միջազգային կառույցները: Ես մեկ անգամ ևս համոզվեցի, որ եթե մի բան ուզում ես և հստակ պատկերացում ունես թե՛ ինչ և ինչի համար պետք է անել, ապա նաև շրջապատն է աջակցում: Այստեղ պետք է նշեմ Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի և իր հայաստանյան գրասենյակի դերը, ու հատկապես ծրագրերի համակարգող Լիանա Բադալյանին, ով նույնպես լցվեց ինձ հետ երիտասարդների միջոցով արհմիության արդիականացման այդ հավատքով և աջակցեց, որ մենք իրագործենք մեր գաղափարները: Այսօր ես կարող եմ թվեր հրապարակել, թե ինչին հասանք մենք այդ աշխատանքի շնորհիվ: Միայն ՖԷ հիմնադրամի աջակցությամբ անցկացրել ենք 6 սեմինար որոնցից յուրաքանչյուրին մասնակցել են 24-25 երիտասարդներ, բացի դրանից նույն հիմնադրամը տարբեր ուսուցումներ է կազմակերպել նաև ՀԱՄԿ-ի երիտասարդության համար, որոնց ևս մասնակցել են մեր արհմիության անդամներից մի քանիսը: Ընդհանուր առմամբ այդ ուսուցման միջով անցավ մոտ 100 երիտասարդ, իհարկե եղան այնպիսիները, որոնք հետագայում աշխատանք փոխեցին և այլևս չեն աշխատում պետական ոլորտում: Ծրագիրն ավարտվեց

«Հայ-գերմանական արհմիութենական դպրոց» մի այլ նախագծով, որի նախաձեռնողն արդեն հենց Լիանա Բադայանն էր: Այդ ծրագիրը հնարավորություն ընձեռեց Հայաստանցի 6 երիտասարդ արհմիութենականի, որոնց թվում էին նաև մեր արհմիության 2 երիտասարդները, այցելել Գերմանիայի Դաշնություն, անմիջականորեն ծանոթանալ Գերմանիայի արհմիությունների երիտասարդական թևի աշխատանքներին, ձեռք բերել ընկերներ այդ արհմիություններում: Դրանից հետո Գերմանիայի 6 երիտասարդ արհմիութենական եղան Հայաստանում և ծանոթացան ոչ միայն մեր արհմիությունների, այլ նաև Հայաստանին: Գերմանիայի արհմիութենականները հեռացան Հայաստանից ջերմ զգացումներով շնորհիվ նաև մեր անդամ կազմակերպությունների կողմից կազմակերպված ընդունելություններին, նրանք այցելեցին Ազգային վիճակագրական ծառայություն, Երևանի քաղաքապետարան, Դիլիջանի քաղաքապետարան, Դիլիջանի և Իջևանի տարածքային միություններ: Գերմանիայից ժամանած արհմիութենականները Ծաղկաձորում սեմինար անցկացրեցին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի երիտասարդների համար, որին մասնակցեցին մեր ճյուղի երիտասարդները: Նույն հանգստյան տանը Ծաղկաձորում իրենց հետ հանդիպեց Կոտայքի փոխմարզպետ պարոն Կարեն Մարգարյանը, որն այսօր էլ է մեզ հետ: Մենք հրավիրեցինք հյուրերին մասնակցելու հանրային ծառայության միջազգային օրվան նվիրված մեր արհմիության բոուլինգի մրցույթին:

Ես անձամբ բարձր եմ գնահատում մեր համատեղ աշխատանքը, որովհետև այսօր նույնպես այս դահլիճում տեսնում եմ այդ ծրագրի շնորհիվ ի հայտ եկած երիտասարդներին, և, ընդհանրապես, կյանքում տեսնում եմ, որ մեր աշխատանքի շնորհիվ նոր ընկերություններ են ձևավորվել և նույնիսկ մեկ Հայ-Գերմանական արհմիութենական ամուսնական զույգ: Այս ամենը նշանակում է, որ մենք մենակ չենք, մեզ աջակցողներ և գնահատողներ կան:



Եվ հուրախություն բուրբիս պետք է տեղեկացնեմ, որ ընդամենը մեկ ամիս առաջ հաստատեցինք արհմիության երիտասարդական խորհրդի կանոնակարգը, և համոզված եմ, որ մեր ճյուղայինի երիտասարդական խորհուրդը շուտով կունենանք, որը կարծում եմ նոր էջ կբացի մեր արհմիության պատմության մեջ:

Ես համոզված եմ, որ մենք շատ ավելին կկարողանայինք անել, եթե նաև ՀԱՄԿ-ում ունենայինք երիտասարդների հետ աշխատելու հատուկ ռազմավարություն: Հույս ունեմ, որ եթե Հայաստանի արհմիությունների Կոնֆեդերացիան այս տարի ձևավորի նոր երիտասարդական հանձնաժողով, ապա մեր երիտասարդները ակտիվ կներգրավվեն աշխատանքներում և կփորձեն նոր շունչ հաղորդել նաև այդ հանձնաժողովին:

Բացի ՖԷ հիմնադրամի աջակցությամբ կազմակերպված սեմինարներից 5 տարվա ընթացքում աշխատակազմի ջանքերով կազմակերպվել են արհմիության ակտիվի համար ևս 20 սեմինարներ, չհաշված այն սեմինարները, որոնք կազմակերպվել են հենց անդամ կազմակերպություններում իրենց նախաձեռնությամբ: Օրինակ հիմա կարող եմ հիշել, որ Գավառի տարածքային միությունը մեր օգնությամբ, բայց իրենց ֆինանսական միջոցներով կազմակերպել է 2 սեմինար արհմիության ակտիվի և ղեկավարների համար: 5 տարում 16 ինֆորմացիոն տեղեկագիր է հրատարակվել, որը ևս ուսումնական տարր ունի, և դրանք բաժանվել են անդամ կազմակերպությունների ղեկավարներին, տեղադրվել են մեր կայքում, բաժանվել են սեմինարների մասնակիցներին: Մեր արհմիության 85-ամյակի կապակցությամբ գիրք ենք գրել և հրատարակել: Յուրաքանչյուր տարի կազմակերպել ենք աշխատողների հանգիստը զեղչված գներով:

Վերջին 5 տարիների ընթացքում փորձ արեցինք խթանել կոլեկտիվ հանգիստը և, չնայած կասկածներին, կարող ենք ասել, որ այդ ժամանակաշրջանում 14 կոլեկտիվներ միասին անցկացրեցին իրենց 1-2-օրյա հանգիստը Հայաստանի և Արցախի հանգստյան տներում, հյուրանոցներում և

առողջարաններում, որոնցից կան այնպիսիք, որոնք յուրաքանչյուր տարի են կազմակերպում իրենց հանգիստը: Միայն ճյուղային արհմիության աջակցությամբ մոտ 1000 հոգի հանգստացել են կոլեկտիվներով, չհաշված անհատական հանգստացողներին:

Բացի դրանից անցկացվել են 12 արտագնա խորհրդի, նախագահության նիստեր և սեմինարներ՝ համատեղելով մասնակիցների հանգստի հետ, որոնց ընդհանուր առմամբ մասնակցել են ևս 290 ակտիվիստներ:

Ես որպես գործատու, ուզում եմ շեշտել նաև գործատուների օգուտը այդ միջոցառումներից, քանի որ համոզված եմ, երբ կոլեկտիվը համախմբված է, մեկը մյուսին օգնելու ցանկություն ունի, գործը ևս առաջ է գնում: Այս առումով, կարծում եմ, որ բարձրաստիճան պետական պաշտոնյաները պետք է ևս շահագրգռված լինեն մեր արհմիության ուժեղացմամբ, քանի որ այդ ուժեղացումը նպաստում է նաև արդյունավետ կառավարմանը, և արհմիության նախագահները տեղերում պետք է կարողանան այս միտքը հասցնել նաև ղեկավարներին:

2013-ին ստեղծեցինք մեր արհմիության տուրիստական գործակալությունը, այստեղ թեև չհաջողվեց ունենալ մեծ առաջընթաց, բայց պետք է ասեմ, որ մեր արհմիության անդամները ևս հնարավորություն են ունեցել զեղչով հանգստանալու: Իհարկե, երբ ստեղծվում էր այդ գործակալությունը, ես հույս ունեի, որ մեր խորհրդի անդամները կկարողանան աջակցել, որպեսզի, իրենց կոլեկտիվների անդամները հանգստանան սոցիալապես հեղինակավոր մեր տուրիստականի միջոցով: Սակայն մեր անդամ կազմակերպությունների ղեկավարները մեծ ակտիվություն չցուցաբերեցին. իհարկե չեմ ասի, որ ընդհանրապես չօգնեցին, բայց համոզված եմ, որ կարող էին ավելին անել: Այստեղ ուզում եմ բերել Հայաստանի պատմության թանգարանի օրինակը, որի արհեստակցական կազմակերպության նախագահ Մարետա Կիրակոսյանը այնպես արեց, որ իրենց կոլեկտիվից համարյա բոլոր սոցիալապես հանգստացողները ուղեգրերը ձեռք բերեցին «Պրոֆտուր»-ից: Եղան

հանգստացողներ նաև մի քանի այլ կազմակերպություններից, բայց նրանց թիվը այնքան մեծ չէր, որ մեր ընկերությունը կարողանար շահույթ ստանալ: Փաստորեն այսօր անարդյունավետության պատճառով ստիպված եղանք ոչ սեզոնին ժամանակավոր դադարեցնել գործունեությունը: Նույն մոտեցման հետ առընչվում էմ նաև այսօր: Նկատի ունեմ Դոկտոր 911-ի հետ պայմանավորվածությունը. արդեն մոտ 2 ամիս է ինչ դիմել էմ բոլորին, բայց դեռ արձագանքներ չկան: Մենք պետք է սովորենք ավելի մոբիլ լինենք և հասկանանք, որ այստեղ չկան անձնական շահեր, կա միայն մեր արհմիության միասնական շահը, և բոլորը պետք է իրենց լուրման ներդնեն:

Առանձին պետք է ասեմ կազմակերպված երթերի մասին: Յուրաքանչյուր տարի ՀԱՄԿ-ի և մյուս ճյուղային արհմիությունների հետ միասին մասնակցել ենք մայիսամեկյան երթերին, որտեղ ամենամարդաշատը եղել է մեր արհմիությունը: Երթից հետո յուրաքանչյուր տարի կազմակերպվել է կինոդիտումներ «Մոսկվա» կինոթատրոնում մոտ 500 հոգու համար: Դիտել ենք «Նժդեհը», «Փարաջանովը», «Երկարատև ճանապարհորդություն» ամերիկյան ֆիլմը, «Կանչը», և «Խոստումը»:

Հոկտեմբերի 7-ին արժանապատիվ աշխատանքի օրը 2013-2014 թ-ին ընդմիջման ժամերին կազմակերպել ենք երթեր կենտրոնական փողոցներով Քաղաքացիական ծառայողների աշխատավարձերի բարձրացման պահանջով, իսկ 2015-ին համայնքային ծառայողների աշխատավարձերի միասնական հաշվարկի պահանջով: Մեր երթերին միացել են նաև ՀԱՄԿ-ի ղեկավարությունը, աշխատակազմը և որոշ ճյուղայինների ղեկավարներ, ինչի համար շնորհակալ ենք: 2016 թ-ին հոկտեմբերի 7-ի կապակցությամբ փողոցային ակցիաներ չենք կազմակերպել, քանի որ այդ օրը Արամ Խաչատրյան դահլիճում նշեցինք մեր արհմիության ստեղծման 85-ամյակը, որին մասնակցեց մոտ 300 հոգի արհմիության անդամներ և Երևանից, և մարզերից, ՀԱՄԿ-ի ղեկավարությունը, ճյուղային միությունների ղեկավարներ, արտասահմանյան գործընկերներ և հյուրեր այնպիսի պետական կառույցներից, որտեղ դեռևս չկա արհեստակցական

կազմակերպություն կամ էլ կա, սակայն առանձին է գործում: Միջոցառման ընթացքում ոչ միայն անդրադարձանք մեր արհմիության պատմությանը, խոսեցինք նաև երկրում ստեղծված աշխատողների և արհմիությունների հետ կապված իրավիճակից, շնորհիվ մեր Աշտարակի, Գավառի տարածքային միությունների և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի, մեր երիտասարդական ակտիվիստների, ներկայացվեց նաև համերգային ծրագիր: 2017 թվականին արժանապատիվ աշխատանքի օրը հրապարակեցինք մեր արհմիության ուղերձը, բարձրաձայնեցինք պետական ոլորտի աշխատողների խնդիրների մասին և հանրային ծառայողների իրավունքների պաշտպանությանը ուղղված վիրտուալ ակցիա կազմակերպեցինք:

Այս տարիների ընթացքում աշխատողների իրավունքներն ու շահերի ներկայացման աշխատանքներում նոր ձևեր սկսեցինք կիրառել. եթե նախկինում այս կամ այն հարցով նամակ էինք ուղղում կառավարությանը, այժմ արդեն մի քանի անգամ փորձեցինք միաժամանակ նույն խնդրի մասին բարձրաձայնել մամուլում, ինչը երևի ճիշտ է, քանի որ մեծ արձագանք է ստանում:

2013-ին ստեղծեցինք նաև մեր կայքը, որտեղ լուսաբանում ենք մեր աշխատանքը, ավելի ակտիվացրեցինք Ֆեյսբուքի էջը, որը դեռևս 2011-ից էր գործում, բայց ոչ այդքան ակտիվ: Օգտագործում ենք նաև գովազդի հնարավորությունները, այսօր մեր էջը ունի 2000-ից ավելի հետևորդներ, ինչը, կարծում եմ, այնքան էլ մեծ թիվ չէ, հաշվի առնելով, որ մեր արհմիության անդամների թիվը մոտ 14000 է: Այստեղ աշխատանք ունեք անելու Դուք. կարևոր է որ տեղերում հրավիրեք ձեր կազմակերպությունների աշխատողներին գրանցվել ՖԲ-ում և հավանել մեր էջը, ինչը կօգնի նաև ձեզ Ձեր աշխատանքում, քանի որ ավելի շատ արհմիության անդամ իրազեկված կլինի:

Շատ կարևոր էմ համարում միջազգային գործընկերությունը: Չնայած բազմիցս լսում եմ քննադատություններ և ՀԱՄԿ-ի հասցեին, և իշխանությունների, որ գումարներ են ծախսվում արտասահմանյան

գործուղումների վրա, ասեմ, որ իմ խորին համոզմամբ դա անհրաժեշտություն է, իհարկե ողջամտության սահմաններում: Ինչպես երկրում սխալ է ունենալ մեկուսացված արհեստակցական կազմակերպություն, այնպես էլ աշխարհի մասշտաբով սխալ է միջազգային արհմիությունների հետ չհամագործակցելը: Սկսենք նրանից, որ այն հնարավորություն է ստեղծում ուսուցման և փորձի փոխանակման համար: իհարկե մենք էլ մեծ գումարներ չունենք և հնարավոր չէ շատ հանդիպումների մասնակցել, բայց այդ մասնակցությունները օգուտ են և՛ արհմիության, և՛ Հայաստան պետության համար: Մի քանի օրինակ դրա հետ կապված՝ 5 տարիների ընթացքում ունեցել ենք Հայաստանում միայն 4 միջազգային միջոցառում, որի մասնակիցները հնարավորություն են ունեցել ծանոթանալու ոչ միայն մեր արհմիությանը, այլ նաև Հայաստանին, պատմությանը, այցելել պատմամշակութային վայրեր: Փաստորեն մոտ 100 արտասահմանյան մասնակցի մենք փորձել ենք այնպես ներկայացնել մեր երկիրը, որ նրանց մոտ եթե ոչ սիրո, գոնե համակրանքի զգացում առաջանա Հայաստանի նկատմամբ: 4 միջոցառումներից 3-ը կազմակերպել է արհմիութենական տուրիստական գործակալությունը միջազգային կազմակերպությունների ֆինանսական միջոցներով. այստեղ նաև օգուտ ենք ունեցել մեր գործակալության համար: Բացի այդ եթե մենք այս կամ այն հետազոտությունը պատվիրելու հնարավորություններ չունենք, ապա միջազգային կառույցները կարող են դա անել և օգնել մեզ տարբեր հարցերով: Որպես օրինակ կարող եմ բերել այն դեպքը, որի մասին արդեն ասացի, երբ մենք Երևանի քաղաքապետարանին ներկայացրել էինք մեր միջազգային արհմիության կողմից պատվիրված մեծ հետազոտությունը հասարակական տրանսպորտի հետ կապված:

Ես փորձեցի կարճ ներկայացնել մեր 5 տարվա գործունեությունը և կփորձեմ ամփոփել: Եթե 2013 թվականի հունվարի մեկի դրությամբ ունեցել ենք մոտ 15500 անդամ, ապա այսօրվա դրությամբ, չնայած բոլոր ջանքերին, ունենք 14000

անդամից մի փոքր պակաս: Չնայած անդամների թվի պակասեցմանը, որը տեղի է ունեցել իմ ելույթի սկզբում թվարկված տարբեր պատճառներով՝ անդամ կազմակերպությունների թիվը, հակառակը, ավելացել է: 2013-ին ունեցել ենք 55 անդամ կազմակերպություն, այսօր արդեն ունենք 57 կազմակերպություն: Վերջին 5 տարիների ընթացքում տարածքային միությունների թիվը պակասել է 7-ով. դրանք դադարել են գործելուց՝ անդամներ չունենալու պատճառով: 2015-ին կորցրել ենք մեր մոտ 2000 անդամով ամենամեծ կազմակերպությունը գործատուի կամայականության պատճառով: Այս 5 տարիների ընթացքում ստեղծվել են և պետական ռեգիստրում մեր աջակցությամբ գրանցվել են 10 նոր կազմակերպություն՝ մոտավորապես 4300 անդամով:

Շատ հաճախ մենք փորձում ենք մեր սխալները, մեղքերը այլոց վրա բարդել, կասենք իշխանություններն են մեղավոր, գործատուն, և երբեք խնդիրը մեր մեջ չենք փնտրում: Սակայն ես համոզված եմ, որ արհեստակցական կազմակերպության ղեկավարից շատ բան է կախված. եթե կոլեկտիվը նրա շուրջ համախմբված է, վստահում և հավատում է արհմիության ղեկավար մարմիններում ընտրվածներին, ապա շատ բաների հնարավոր է հասնել: Այսօր շատ կազմակերպություններում նկատվում է մեկանձնյա ղեկավարում, ինչը անթույլատրելի է. պարտադիր պետք է լինի թիմային աշխատանք, մարդիկ պետք է տեսնեն, որ արհմիության նախագահը թիմ ունի, և այդ թիմի անդամները հարգված են կոլեկտիվի կողմից: Միայն այսպիսի մոտեցումը կխթանի արհմիության զարգացմանը: Արհեստակցական կազմակերպության նախագահը, որը գալիս լսում է մեզ մոտ որևէ բան, պետք է տեղ հասցնի արհմիության անդամներին, տեղերում ինֆորմացիայի տարածման համակարգ պետք է ստեղծվի:

Պիտի շեշտեն, որ գուցե մեկ հոգով էլ կարելի է ինչ-որ բանի հասնել, բայց մեկ ծաղկով գարուն չի գալիս, ավելի ռեալ է խնդիրները լուծել միասնական: Վերջին տարիների փորձը վկայում է, որ շատ հարցեր, որոնց վերաբերյալ եղան

մասսայական բողոքներ, որոշ չափով լուծվեցին: Այս պարագայում կարևոր է մեր բոլորի ակտիվությունը: